Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Ցանկանու՞մ եք զարգացնել Ձեր տնտեսությունը և դառնալ հաջողակ գյուղատնտես: Օգտվե՛ք գյուղոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից:

Ծրագրի շրջանակում վարկը շահառուներին հասանելի կլինի ընդամենը 5 %-ով, ավելին՝ եթե որոշեք միավորվել և կոոպերատիվ կազմել, պետական սուբսիդավորման արդյունքում կարող եք նույնիսկ 3 %-ով վարկ ստանալ:

Իսկ ահա սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսվարողներին վարկը կտրամադրվի 0 %-ով:

- Վարկի չափը՝ 3-15 մլն ՀՀ դրամ,
- Մարման ժամկետը՝ մինչև 5 տարի՝ կախված ներդրումների ուղղվածությունից: